



AGORA
CENTRAL EUROPE



Պետական աջակցության գյուղատնտեսական ծրագրերի և ԵՄ կողմից ֆինանսավորվող և «LEADER» մեթոդաբանությամբ իրականացվող ծրագրերի համեմատական վերլուծություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ	4
«LEADER»-ի հիմնարար սկզբունքները.	4
Տեղական ակտիվ խումբ (ՏԱԽ)	4
Հետազոտության նպատակն ու խնդիրները	6
«LEADER» ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ	7
ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ «LEADER» ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ	9
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով փրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Երիտասարդ ժունալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտի պեպրական աջակցության ծրագրերի վերլուծություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Երիտասարդ

Ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության փեսակերները:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՄ	Եվրոպական միություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
հա	հեկտար
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՏԱԽ	Տեղական ակտիվ խումբ
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

«LEADER»-ը գյուղական բնակավայրերում տարածքային զարգացման մոտեցում է (ֆրանսերեն հապավմամբ՝ «Գյուղական տնտեսության զարգացման գործողությունների միջև կապեր»), որի նպատակն է աջակցել գյուղական տարածքների զարգացմանը՝ գյուղական/փոքր քաղաքային բնակավայրերը վերաբացահայտելու և տեղական տնտեսական գործունեություն ծավալելու համար: Այն դիտվում է նաև որպես «համայնքի (տեղական բնակչության հանրույթի) կողմից առաջնորդվող տեղական զարգացում» (ՀԱՏՁ):

«LEADER»-ի հիմնարար սկզբունքները.

- 1) ներքևից վերև մոտեցում,
- 2) տարածքահեն մոտեցում,
- 3) կապերի հաստատում,
- 4) համագործակցություն,
- 5) տեղական գործընկերություն,
- 6) նորարարություն,
- 7) ինտեգրված և բազմոլորտ ռազմավարություն:

Տեղական ակտիվ խումբ (ՏԱԽ)

LEADER-ի հիմնական գործիքը՝ Տեղական ակտիվ խումբն է (ՏԱԽ) , որը ձևավորվում է տեղական գործընկերների կողմից ներքևից վերև սկզբունքով: ՏԱԽ-ը պատասխանատու է զարգացման գործում տեղական կառավարման համար և ներկայացնում է հանրային, գործարար և քաղաքացիական հասարակության ոլորտները: ՏԱԽ-երը որոշում են իրենց գործունեության տարածքային սահմանները, ստեղծում գործընկերություններ, մշակում և հաստատում են գյուղական/քաղաքային համայնքների/բնակավայրերի ինտեգրված տեղական զարգացման ռազմավարություններ, որոնց հիման վրա իրագործում են տարածքային զարգացմանն աջակցող նախաձեռնություններ ու միջոցառումներ:

ՏԱԽ-ի կազմում տարբեր դերակատարներ (հանրային հատված, մասնավոր (գործարար) հատված և քաղաքացիական հասարակություն) ներգրավված են 33.3 տոկոս հավասար համամասնությամբ: Ընդ որում, ըստ LEADER-ի մեթոդաբանության, վերջիններիս անդամների առնվազն 50 տոկոս + 1 անձ համամասնությունը ներկայացնում է գործարար և քաղաքացիական հասարակության հատվածները, իսկ անդամների 50 տոկոս - 1 անձ համամասնությունը՝ հանրային տեղական մարմինները (պետական և ՏԻՄ հաստատությունները):

Ըստ LEADER մեթոդաբանության՝ համայնքը դիտարկվում է ոչ միայն որպես վարչատարածքային միավոր, այլև խրախուսվում է տարածքի զարգացումը դիտարկել համայնքի վարչատարածքային սահմաններից դուրս՝ ելնելով կարևոր այն սկզբունքից, որ համայնքը նաև բնակիչների հանրություն է, որոնք ունեն վարչական սահմաններով չպայմանավորված ընդհանրություններ: Բացի այդ LEADER մեթոդաբանությունը նկատի է առնում, որ համայնքի վարչական տարածքում գործում են ինչպես հանրային կառավարման (պետական և տեղական), այնպես էլ քաղաքացիական հասարակության և գործարար ոլորտների տարբեր սուբյեկտներ: Այսպիսով, տարածքային զարգացումը դիտարկվում է ինտեգրացված մոտեցմամբ՝ ներառելով բոլոր տեղական շահագրգիռ դերակատարներին:

Հայաստանի Հանրապետության գյուղական բնակավայրերում այս մոտեցումը փորձարկվել է ԵՄ Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում» ծրագրի շրջանակներում՝ որպես ԵՄ «LEADER»/Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏՁ) հայեցակարգի մաս և նպատակ է հետապնդում տեղական դերակատարներին ու բնակչությանն ակտիվորեն ներգրավել զարգացման գործընթացներում, ստեղծել տեղական զարգացմանն օժանդակող ենթակառուցվածքներ և բարելավել համապատասխան նախարարությունների ու մարմինների կարողություններն՝ ի նպաստ Հայաստանում ԵՄ ՀԱՏՁ մոտեցման հաջող իրականացմանը և կայունության ապահովմանը:

ՀՀ Լոռիի, Տավուշի և Շիրակի մարզերում ստեղծվել և ներկայումս գործում են թվով 8 Տեղական ակտիվ խմբեր (ՏԱԽ): ՏԱԽ-երը կազմել և հաստատել են իրենց քառամյա տեղական զարգացման ռազմավարությունները և գործողությունների երկամյա պլանները: Բոլոր 8 ՏԱԽ-երը միավորվել և ձևավորել են նաև «ԱՐՄԼԱԳ» ազգային ցանց:

ՏԱԽ-երի ռազմավարությունները, որպես կանոն, ներդաշնակեցված են տեղական հինքնակառավարման մարմինների կողմից հաստատված համայնքների զարգացման Ծրագրերի բովանդակությանը: Ի տարբերություն այդ ծրագրերի՝ ՏԱԽ-ի մշակված ռազմավարությունը հնտեգրված զարգացման ռազմավարություն է, որը ներառում է գործարար, ՏԻՄ և քաղաքացիական հասարակության գործառույթների շրջանակները և ուղղված է ՏԱԽ-ի տարածքի զարգացմանը: Ռազմավարական գործողությունների ծրագիրը հիմնված է ՏԱԽ-ի անդամների համաձայնության վրա, որոնք ներկայացնում են բոլոր տեղական շահագրգիռ կողմերին և իրագործվում են բոլոր կողմերի փոխադարձ համաձայնությամբ ու համատեղ կառավարմամբ:

«LEADER»-ը՝ որպես տարածքային զարգացման մոտեցում, ընդգրկված է «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման 2024 – 2030 թվականների ռազմավարության» նախագծում, և այս ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1. Միջնաժամկետ հատվածում ընդլայնել նոր նախաձեռնության աշխարհագրական ծածկույթը՝ աստիճանաբար ներառելով այլ մարզերի բնակավայրեր ևս:
2. Իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություն, որի արդյունքում կմշակվի պետական բյուջեից ՏԱԽ-երի ֆինանսավորման ուղղություններն ու մեխանիզմները նկարագրող կարգը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Սույն **հետազոտության նպատակն** է՝ ուսումնասիրել պետական աջակցության գյուղատնտեսական ծրագրերի և ԵՄ ֆինանսավորմամբ «LEADER» մեթոդաբանությամբ իրականացված ծրագրերի նմանությունները, առանձնահատկություններն ու տարբերությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել «LEADER» մեթոդաբանությամբ իրականացված ծրագրերի ուղղվածություններն ու առանձնահատկությունները:

2. Իրականացնել այդ և պետական աջակցության ծրագրերի միջև համեմատական վերլուծություն:
3. Ներկայացնել «LEADER» մեթոդաբանությամբ իրականացված և պետական աջակցության ծրագրերի արդյունավետության բարձրացման, ՏԱԽ-երի և պետական մարմինների միջև համագործակցության խթանման առաջարկներ:


Հետազոտության **գործիքներն** են՝

- Ծրագրերի վերաբերյալ քանակական տվյալների հավաքագրում:
- Ծրագրերի վերաբերյալ որակական տվյալների վերլուծություն:
- Ստանդարտացված ձևաթղթով հարցումներ «LEADER» մեթոդաբանությամբ իրականացված ծրագրերի շահառուների շրջանում:
- Որոշ հարցերի վերաբերյալ փորձագիտական կարծիքների վերլուծություն:

«LEADER» ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Նախ և առաջ, պետք է նշել, որ բոլոր 8 ՏԱԽ-երն իրենց ռազմավարական ծրագրերում ունեն գյուղատնտեսությունը՝ որպես առաջնահերթություն, ինչը վկայում է վերջինիս կարևորությունը գյուղական բնակավայրերի զարգացման տեսանկյունից:


Ընդ որում, այդ կարևորությունն ընդգծվում է նաև, երբ վերլուծում ենք ՏԱԽ-երի կողմից ֆինանսավորված ծրագրերն՝ ըստ ուղղվածությունների.



Գրաֆիկը ցույց է տալիս, որ ՏԱԽ-երի կողմից ֆինանսավորված ծրագրերի գրեթե կեսը գյուղատնտեսական ուղղվածության են: Գրաֆիկում առանձնացված է նաև տուրիզմի ոլորտը, քանի որ վերջինս, ի տարբերություն, օրինակ, մշակութային և կամ համայնքային ծրագրերի, բավականին սերտ առնչություն ունի գյուղատնտեսական ծրագրերի հետ, և հաճախ դրանք լինում են նաև փոխկապակցված, միավորված (օրինակ՝ ագրոտուրիզմ, էնոտուրիզմ և այլն):

Ուսումնասիրելով առանձին ՏԱԽ-երի կողմից իրականացված գյուղատնտեսական ծրագրերը, կարելի է նկատել մի քանի հետաքրքիր հանգամանքներ/օրինաչափություններ

1. Համեմատաբար բարձր գոտիներում առավելապես տարածված են անասնապահական, թռչնաբուծական, ինչպես նաև դրանից բխող գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ծրագրերը:
2. Առավել ցածրադիր վայրերում առավելապես տարածված են այգեգործությունը, պտղաբուծությունը, դեկորատիվ ծառերի աճեցումը:



ՏԱԽ-երի կողմից իրականացված ծրագրերն ունեցել են հետևյալ բյուջեները.


Լոռու և Տավուշի մարզերի պարագայում՝ մինչև 600.000 ՀՀ դրամ արժողությամբ Սաղմնային դրամաշնորհներ և առավելագույնը 10.000.000 ՀՀ դրամ արժողությամբ «մեծ ծրագրեր»:

Շիրակի մարզի պարագայում իրականացվել են հիմնականում 5.000-35.000 եվրո արժողությամբ ծրագրեր:



ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ «LEADER» ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «LEADER» մեթոդաբանությամբ իրականացված ծրագրերի ուղղությունները՝ կարելի է նկատել, որ դրանք ունեն մի շարք ընդհանրություններ պետական աջակցության ծրագրերի հետ, մասնավորապես՝ այգեգործության, բուսաբուծության, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման և այլ ուղղություններով: Եվ ենթադրվում է, որ «LEADER» ծրագրի ակտիվ շահառուները կարող էին դիմել նաև պետական աջակցության ծրագրերին, սակայն իրականում պատկերը մի փոքր այլ է:

Նախ անդրադառնանք «LEADER»-ի շահառուների՝ պետական ծրագրերի մասին տեղեկացվածությանը. այն բավականին բարձր է՝ 93.6%, սակայն, երբ գնահատում ենք այդ իրազեկվածության խորությունը, ապա կստանանք հետևյալ պատկերը.




Որքանո՞վ են օգտվել պետական աջակցության ծրագրերից



Ծրագրերին չդիմելու հիմնական պատճառներն են.

Պետական աջակցության ծրագրերին դիմելու դժվարություններ



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իրականացնել պրոակտիվ հանրային իրազեկում՝ կիրառելով տեղական ՀԿ-ների հետ համագործակցության ռեսուրսը: Այս համատեքստում արդյունավետ կլինի ՏԱԽ-երի հետ համագործակցությունը ՀՀ Լոռու, Տավուշի ու Շիրակի մարզերում:
2. Պետական աջակցության ծրագրերի առաջնահերթությունների սահման նպատակով իրականացնել խորհրդատվական հանդիպումներ տեղական ՀԿ-ների հետ՝ ապահովելով «վերևից ներքև» և «ներքևից վերև» գաղափարների համադրում:
3. Իրականացնել պետական աջակցության ծրագրերի իրականացման որոշ գործառույթների պատվիրակում տեղական ՀԿ-ներին: Այդպիսիք կարող են լինել.
Ա. Խորհրդատվության տրամադրում պոտենցիալ շահառուներին
Բ. Շահառուների վերապատրաստում
4. Որպես համաֆինանսավորման աղբյուր դիտարկել երրորդ կողմի, մասնավորապես՝ դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները: